

Կայացավ ՀՀ Արագածոտնի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստ

Փետրվարի 9-ին կայացավ ՀՀ Արագածոտնի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նիստ: Փոխմարզպետ Նունե Մովսիսյանը ամփոփեց նախորդ նիստի ժամանակ բարձրացված հարցերի իրականացման արդյունքները: Ըստ այդմ, նշվեց, որ ,, Ընտանիքի տարի,, ծրագրի շրջանակում կազմակերպվել են ,, Ոսկե հարսանիք,, ,,Անվանի գերդաստան,, միջոցառումները, ապահովվել է Ապարան եւ Թալին քաղաքների մասնակցությունը ,,Երիտասարդական քաղաք,, մրցույթին:

Խորհրդի անդամների հետ քննարկվեց նոր միջոցառումների ծրագիրը, որը հիմնականում նվիրված է լինելու Յեղասպանության 100 ամյակին: Իրականացվելու են հիշատակի ծառատունկ, կազմակերպվելու են ,,Արդի քաղաքական դաշտում հայի տեղն ու դերը,, թեմայով կլոր սեղան, դասախոսություն՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՎԼ. Պետրոսյանի եւ պատմական գիտությունների թեկնածու Հարություն Պապոյանի մասնակցությամբ: Նախատեսվում է նաեւ ,, Դու Արագած, Ալմաստ վահան,, վերտառությամբ փառատոնի, նկարիչների ցուցահանդեսի կազմակերպում, Արագած համայնքում առաջին աշխարհամարտի վերաբերյալ թանգարանային նմուշների հավաքագրում: